



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

26 փետրվարի 2019թ. թիվ 258

**ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
ԱԼԱՎԵՐԴԻ ԵՎ ԱԽԹԱԼԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանին, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արտակ Օհանյանին և քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանին ս/թ փետրվարի 26-ին մեկ օրով գործուղել Ալավերդի և Ախթալա համայնքներ՝ խախտումներով իրականացվող աղբահանության հետ կապված հանգամանքները ճշտելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

 Invalid signature

X 

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թ. փետրվարի 26  
ք.Վանաձոր